ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» մայիսի 2017 թվականի N 89-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 124-րդ կետով, ***որոշում եմ.***

Թույլատրել Էդգար Հայկի Սարգսյանին շարունակելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի 45-րդ փողոցի թիվ 48 հասցեի տնամերձ հողակտորում 2013 թվականի ապրիլի 23-ի թիվ 12 շինարարության թույլտվությամբ տրված բնակելի տան և քարե պարիսպի կառուցման շինարարական աշխատանքները համաձայն հաստատված նախագծի և թույլտվության ժամկետը երկարաձգել մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. մայիսի 17
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» մայիսի 2017 թվականի N 90-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Էրիկ Սուրենի Սեյրանյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի Այգեգործական 4-րդ թաղամասի թիվ 6 հասցեի հողակտորում տալ երկհարկանի այգետնակի վերակառուցման շինարարության թույլտվություն:

2. Պարտավորեցնել Էրիկ Սուրենի Սեյրանյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. մայիսի 18
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» մայիսի 2017 թվականի N 91-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Ջրվեժ համայնքի բնակիչ Թաթոս Ժորժիկի Եփրեմյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի 30-րդ փողոցի թիվ 11 հասցեի տնամերձ հողակտորում երկու բնակելի տների և ավտոտնակի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Քաղաքացի Վահրամ Սարգիսի Փիրջանեանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի 45-րդ փողոցի թիվ 30 հասցեի տնամերձ հողակտորում բնակելի տան կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. մայիսի 20
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» մայիսի 2017 թվականի N 92-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ և 9-րդ կետերի, 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ և 5-րդ կետերի պահանջներով, ***որոշում եմ.***

1. Համայնքի վարչական տարածքում ինքնակամ շինարարության, հողազավթման, հողերի և շենք-շինությունների ոչ նպատակային օգտագործման դեպքերը, կառուցապատողներին տրված շինարարության թույլտվության ժամկետը ավարտված և ավարտական ակտով չփաստագրած շինությունները գույքագրելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Մարգարյան Արամազդ - աշխատակազմի առաջատար մասնագետ (նախագահ),

Վարդանյան Արտակ - աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ

Մնացականյան Կարինե - ֆինանսական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի երկրորդ կարգի մասնագետ:

2. Հանձնարարել հանձնաժողովին՝

1) մեկ ամսյա ժամկետում գույքագրել որոշման 1-ին կետում նշված դեպքերը,

2) ներկայացնել առաջարկություն՝ գույքագրման արդյունքում արձանագրված դեպքերի կանխարգելման, հետագա հետևանքների վերացման ուղղությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. մայիսի 20
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» մայիսի 2017 թվականի N 93-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 30 և 48-րդ կետերի պահանջներով, ***որոշում եմ.***

1.Համայնքային սեփականություն հանդիսացող 11,4 քառ.մ մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, 1-ին փողոց, թիվ 1/26/1:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանում՝ Ջրվեժ համայնքի 1-ին փողոցի թիվ 1/26/1 հասցեում գտնվող գույքի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. մայիսի 20
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» մայիսի 2017 թվականի N 94-Ա

ԿԱՐԻՆԵ ՌԱՖԻԿԻ ԱԶԱՏՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմաններն ուսումնասիրող հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժի 5-րդ փողոցի թիվ 54 տան բնակիչ Կարինե Ռաֆիկի Ազատյանի ընտանիքի վերաբերյալ և հաշվի առնելով այն, որ երկարատև ծանր հիվանդությունից հետո մահացել է նույն հասցեում բնակվող մայրը՝ Թամարա Հմայակի Սահակյանը և ընտանիքի սոցիալական վիճակից ելնելով Կարինե Ռաֆիկի Ազատյանը դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

Հանձնարարել ֆինանսական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Կարինե Ռաֆիկի Ազատյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. մայիսի 23
գ. Ջրվեժ